ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱ
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՓՈՒԼ
ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ-2017

11-րդ դասարան

Պատասխաններ

1. Հոկտեմբեր ամսանունը գալիս է լատիներեն octo (ութ) թվականից: Հռոմեացիները այդ ամսվան ասում էին october mensis (ութերորդ՝ հոկտեմբեր ամիս), կարճ՝ october:Հոկտեմբերը հայկական տոմարում համընկնում է **սահմի** անվան հետ:

2. Ըստ հռոմեական դիցաբանության՝ Բաքոսը եղել է խաղողագործության, գինու,գինարբուքի աստված: Բաքոսը համապատասխանում է հունական Դիոնիսիոսին: Հին հույները մեծ տոնախմբություններ էին նվիրում Դիոնիսիոսին, որտեղից և սկիզբ են առել թատերական ներկայացումները: Բաքոս կամ Դիոնիսիոս ասելով հասկացվել է գինեմոլություն, զվարճություն: Այստեղից էլ առաջացել է « Բաքոսի երկրպագու » արտահայտությունը:

5.նվագածու-նվագարան
հովար-հովիար
գինարբուք-գինարբուկ

6.նավաստի-նավազ
մավի-լազուր
ստվար-հոծ
արբեցնող-զգլխիչ
աղախին-նաժիստ

7. առընթեր-առ+ընդ+թեր
թեր-կողմ
թեր-ծաղկի թերթ

8.հանդերձ- գոյական(կապ)
դուրս- տեղի մակբայ(կապ, գոյական)
կարծես-վերաբերական(ըղձական եղանակի բայաձև)
շուրջ-կապ(մակբայ)

Հանրապետական օլիմպիադայի նախագահ՝ մ.գ.թ., դոցենտ Գ. Խալաթյան